—

Հայ տառերի գիւտի 1500-ամեայ և հայ տպագրութեան 400-ամեայ յոբելեանական հանդէսների առիթով՝ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը որոշել է հետևեալը. 1) Ընկ. կողմից ներկայացուցիչներ նշանակել պ. պ. Ս. Մելքումեանին և Կ. Խալաթեանին էջմիածնում կայանալիք հանդէսներին մասնակցելու համար։ 2) Զրիսաբար բաժանել Ռուշանեան, Գայիանեան և Ներսիսեան դպրոցների բարձր դասարանների աշակերտ-աշակերտուհիներին Ա. Պողոսեան ֆոնդի գումարով հրատարակած «Ս. Մեսրոպ» գրքից։ 3) Խորհրդի ամբողջ կազմով ներկայ գտնվել Թիֆլիսում կայանալիք յոբելեանական հանդէսներին։

—

Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը որոշել է Հայոց Համազգային Յոբելեանի օրը շնորհաւորական հեռագիր ուղարկել էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին և յանձնել քաղաքագլուխ Ա. Խատիսեանին նաև անձամբ շնորհաւորութիւն յայտնել՝ կիրակի օրը Ներսիսեան դպրոցում կայանալի ակտի ժամանակ։

—

Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան մէջ հայ ծառայողները բացել են իրանց մէջ հանգանակութիւն յօգուտ դպրոցական ֆոնդի, ի յիշատակ Համազգային Յոբելեանի։